ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2015 թվականի N 83-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 138-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի ա/ ենթակետով, **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012 թվականի նոյեմբերի 2-ի N 138-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի առողջապահության համակարգի գլխավոր մասնագետների աշխատանքների կազմակերպման կանոնակարգը և մարզի հիմնական մասնագիտությունների գծով գլխավոր մասնագետների անվանական կազմը՝ նոր խմբագրությամբ, համաձայն N1 և N2 հավելվածների:

2. Մարզի առողջապահության համակարգի գլխավոր մասնագետների համակարգող նշանակել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Նունե Գևորգյանին:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2015թ. հունիսի 15
ք. Կապան

Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2015 թվականի հունիսի 15-ի
N 83-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Մարզի առողջապահության համակարգի գլխավոր մասնագետները /այսուհետ՝ գլխավոր մասնագետներ/ կազմակերպում են իրենց աշխատանքը՝ ղեկավարվելով ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, ՀՀ առողջապահության նախարարության հրամաններով և մեթոդական ցուցումներով, մարզպետի որոշումներով և կարգադրություններով, բուժկանխարգելիչ հաստատությունների կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կանոնակարգով:

2. Գլխավոր մասնագետները հաշվետու են մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը, ՀՀ Սյունիքի մարզպետին կից <<Առողջապահական խորհուրդին>>:

3. Գլխավոր մասնագետները պարտավոր են՝

- ապահովել առողջության պահմանմանն ուղղված պետական առողջապահական նպատակային ծրագրերի իրակացումը.
- մարզի բուժկանխարգելիչ հաստատությունների գործունեության և առկա իրավիճակի վերլուծության հիման վրա մշակել միջոցառումներ՝ ուղղված աշխատանքների բարելավմանը, հիվանդացության և մահացության իջեցմանը.
- ձեռնարկել միջոցներ հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման և բուժման նոր մեթոդների, ինչպես նաև առողջապահության կազմակերպման ոլորտի նորությունների ներդրման համար.
- իրականացնել այցելություններ մարզի բուժկանխարգելիչ հաստատություններ տեղում մեթոդական և գործնական օգնություն ցուցաբերելու համար.

- ապահովել մարզի բնակչությանը մատուցվող մասնագիտական բժշկական և խորհրդատվական ծառայությունների որակի բարձրացմանը՝ համագործակցելով << առողջապահության նախարարության համապատասխան ոլորտի մասնագետների հետ.

- նպաստել բուժհիմնարկների համագործակցությանը և փոխադարձ կապի ամրապնդմանը.

- պարբերաբար կատարել բնակչության առողջության վիճակի վերլուծություն, առկա խնդիրների ու կարիքների գնահատում և ներկայացնել իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկություններ.

- իրականացնել հսկողություն բուժօգնության կազմակերպման որակի նկատմամբ.

- սույն կանոնակարգի դրույթներին համապատասխան կատարված աշխատանքների վերաբերյալ յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնել հաշվետվություն:

4. Գլխավոր մասնագետը պատասխանատու է աշխատանքային և իրականացվող ծրագրերի ցուցանիշների հաշվառման և հաշվետվությունների հավաստիության համար:

5. Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը ապահովում է մարզի գլխավոր մասնագետների գործառույթներից բխող անհրաժեշտ միջոցառումների կազմակերպումը և ներկայացնում առաջարկություններ գլխավոր մասնագետների գործունեության վերաբերյալ:

<< Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Ղազարյան

12. մաշկավեներաբան -Լևոն Հարությունյան, <<Գորիսի ԲԿ >> ՓԲԸ